ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 091407836, էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

11.12.2019
343-88

Երևան քաղաքի Կենտրոն վարչական
շրջանի ղեկավար Ավետ Պողոսյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Պողոսյան,

Ինֆորմացիայի ազատության կենտրոն է դիմել «Հրապարակ» օրաթերթի լրագրող Կորյուն Սիմոնյանը՝ խնդրելով աջակցել տեղեկություն ստանալու հարցում: Լրագրողը 2019 թվականի դեկտեմբերի 3-ին ուղարկել է տեղեկություն ստանալու հարցում, որը սակայն մնացել է անպատասխան:

Համաձայն ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում ենք տրամադրել հետևյալ տեղեկությունները.

1. Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի ղեկավար նշանակվելուց անմիջապես հետո Դուք աշխատանքից ազատել եք Ձեր տեղակալներին և աշխատակազմի քարտուղարին: Խնդրում ենք տրամադրել տեղեկություններ այն մասին, թե ինչ պատճառով և ինչ իրավական հիմքով են վերոհիշյալ աշխատողներն ազատվել աշխատանքից:
2. Խնդրում ենք տրամադրել Ձեր և Ձեր տեղակալներ Արմեն Ազիզյանի ու Նիկոլայ Սարբեկյանի կենսագրական տվյալները:

Խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում:

Հարգանքով՝
ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան